



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՅ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻԷՆ

(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1927, էջ 193)


Բ. — ԵՐԲ ԵՒ ԻՆՉՊԵՍ ԶԱՏՈՒԵԾԱՆ ՀԱՅՔ

Արդի հասարակաց կարծիքն այդ բաժանումը կը կապէ Գաղկեղոնի ժողովին հետ ու կը վերջացնէ, առանց տառապելու մանր հաշիւներու մէջ: Հին յիշատակաբանք իրարու հակառակ ժամանակներ կը նշանակեն, հարցին մէջ խառնելով նաև անուններ՝ որոնք բնաւ մասն ունեցած չեն անոր մէջ, իսկ ես՝ անջատման կարծեցեալ և իրական թուականաց միջև անդունդ մը կը նշմարեմ, որ հիշնովին կը յեղաշրջէ հարցին հանգամանքները: Ահրաժեշտ է ուրեմն՝ որ խնամոտ քննութեամբ մը ճշդենք նախ բաժանման ժամանակն ու գործիչները, և ապա անցնինք յարակից խնդրոց:

Ա. — 1. Փրկչական 451 թուին, մինչդեռ Հայք աւետարանի պաշտպանութեան

համար կը կոուէին ցմահ Պարսից դէմ, Բիւզանդիոնի հանդէպ՝ Գաղկեղոնի մէջ Դ տիեզ. ժողովն ալ կը պայքարէր Եւտրեւսի մոլորութեան հակառակ, ի ջատագովութիւն ուղղափառ վարդապետութեան: Անոր մասնակից էին 600 եպիսկոպոսներ, շատ աւելի բազմաթիւ քան նախորդ ժողովոց մէջ. (Նիկիոյ՝ 318, Կոստանդնուպոլսին՝ 150, Եփեսոսին՝ 200): Բոլորն արեւելի էին, բաց ի Հռովմայ հինգ նուիրակներէն և երկու ափրիկեցիներէ. և իրենց մէջ կային նաև եպիսկոպոսներ յունական Հայաստանէն, որոցմէ շատ յայտնի են ժողովականաց ցուցակին մէջ՝ Կիրակոս եպս. Էկեղեաց, Պրոկո Ռոմիլիոյ¹, Պապ(իսա) Երվալայ², Կոստանդին Մելիտենոյ Հայոց, Յովհաննէս Սեբաստ.

1. Mansi, VI, 674. — 2. Նույն՝ 575.



տիոյ՝ և Յովհաննէս Նիկողայուսի Ա
Հայոց՝:

Եւտրէզս, բիւզանդացի վանականը, ինք
զինքը հետևող ցուցնելով երեք տիեզ.
ժողովոց և սուրբ հարց վարդապետութեան,
կ'ըսէր Յիսուսի համար. «Գաւանիմ յեր-
կոց բնութեանց լեալ զՃէրն յառաջ քան
զմիտութիւնն. բայց յետ միտութեան զմի
բնութիւնն դաւանիմ»¹. և չէր ուզեր ըսել՝
թէ «մարմին Տեսնոն մերոյ բնակից մեր
եղև, այլ խոստովանիմ՝ թէ Կոյսն սուրբ
բնակից մեր է»². Յայտնի էր՝ թէ կ'ու-
րանար մարդկային բնութիւնն ի Քրիստոս,
և «մի բնութեամբ» կ'ընծայէր անոր լոկ
աստուածայինը, իր մօտենար Վաղենտի-
նեանց, որոնք Փրկչին մարմինն երկնքն
իջած կը համարէին, և Ապողինարիանց՝
որ նոյն մարմինը մարդկայինն հետ հա-
մարուն չէին ճանաչեր՝: Քաղկեդոնի ժո-
ղովը դատապարտեց զԵւտրէզս և անոր
ուսուցած միաբնակութիւնը, դաւանելով
ի Քրիստոս երկու անշփոթ և անբաժա-
նելի բնութիւնը մի անձին մէջ՝:

Ազանդաւորին կուսակիցները ցրուեցան
ի Պաղեստին, Եգիպտոս, Անտիոքիա, և
պարբերեան ժողովին դէմ, զէնք բռնելով
կամ մանաւանդ իբրև դիմակ գործածելով
Աղեքսանդրու հայրապետին՝ ս. Կիրիլի
մեծ անունն ու սահմանը Նեստորի դէմ,
«մի բնութիւն Բանին մարմնացելոյ», և
չարամտութեամբ ներկայացնելով զՔաղ-
կեդոն հետևող Նեստորի չարաչար բա-
ժանման. որով մեծ ընդունելութիւն գտան
կայսերութեան կեդրոնէն հեռի այդ կող-
մերուն մէջ, իսկ Բիւզանդիոն և յունական
աշխարհը Մարկիանոս կայսեր հետ՝ որ
ժողովին պաշտպանն էր, և ամբողջ ա-
րևմուտքը հաստատուն մնացին քաղկեդո-
նեան դաւանութեան մէջ: Յետ կայսեր
մահուան՝ անոր ջաւղին հետևեցան Պուլ-
քերիա կայսրուհին և Մարկիանոսի յաջոր-
դը Լևոն Ա (457-474), որ քննութիւն
մ'ընելով՝ 1600 եպիսկոպոս կուսակից

գտաւ Քաղկեդոնի՝, Եւ երեսուն տարի
կայսերութեան պաշտօնական դաւանու-
թիւնն էր քաղկեդոնականութիւնը:

Լևոնի յաջորդը Զննոն՝ ուզելով բառ-
նալ պատակաւորները, որ մինչև ի Կոս-
տանդնուպոլիս ալ կը հասնէին, 482ին
հանեց իւր նշանաւոր Հենոտիկոն (միաւո-
րիչ) կոչուած թուղթը, թելադրութեամբ
ոստանին Ակակ պատրիարքին, որ նախ
քաղկեդոնական և ապա հակառակորդ
մը դարձաւ ժողովոյն: Կայսրը պարզելով
հոն Եկեղեցւոյ աւանդական վարդապետու-
թիւնը, ի հաշտութիւն կը հրաւէր Քաղկե-
դոնի պատնառաւ գծտեալները, դատա-
պարտելով զՆեստոր ու Եւտրէզս, և զգոր
որը այլազգ խորհեալ իցէ ի Քաղկեդոն
կամ յայլուր»³, և չխօսելով բնաւ երկուց
բնութեանց մասին: Այս երկդմի ընթաց-
քով իւրախուսեց նոյն ժողովին հակառա-
կորդները, և Հռովմայ փելիքս Գ հայրա-
պետը 484ին ստիպուեցաւ բանադրել զԱ-
կակ, որոյ համար երկու աթոռներու մէջ
բաժանուով մը յառաջ եկաւ, որ տեեց
նաև Անաստաս կայսեր օրով (491-518)
ու վերջացաւ 519-ին, Յուստինոս կայսեր
և Յովհաննէս Ա պատրիարքի ջանքերով.
և այսպէս քաղկեդոնեան վարդապետու-
թիւնը վերջնականապէս տիրապետող դար-
ձաւ⁴:

2. Գալով Հայաստանի, ի՞նչ ուղղու-
թիւն բռնեց մեր ազգն այդ խնդրոյն մէջ:
Քաղկեդոնի ժողովին (451ին) յաջորդող
հայ մատենադրաց քով, ինչպէս են Եղի-
շէ, Փարպեցիք ու Խորենացիք, որ և է
ակնարկութիւն չենք գտներ նոյն ժողովի
մասին, որովհետև իրենց պատմութեան
նիւթէն դուրս կը մնար, իսկ հետեւելով
իրաց ընթացքին, յունահայ եպիսկոպոսաց
նոյն ժողովին մասնակցութենէն զատ՝ զոր
յիշեցինք, կը նկատենք նաև՝ որ խաղա-
ղութիւն և սէր կը տրէր բոլոր Հայոց ու
քաղկեդոնական Յունաց մէջ: Ս. Յովսե-
փայ կը յաջորդեն Մեկիստէ, Մովսէս Ա և

1. Mansi, 567. — 2. Նոյն՝ 571. — 3. Հմմտ. Vacant, V, 1590. — 4. Անդ՝ 1591. — 5. Նոյն՝ II,

2194-95. — 6. Goschler, XV, 239-40. — 7. Հմմտ. Vacant, VI, 2158-78.

Գիտ¹, որոց առաջին երկուքը կը յիշէ միայն Ղազար² առանց տեղեկութեան, իսկ վերջնոյն բարեկամութիւնը Յունաց հետ, որոց քով աշակերտած ալ էր, կը շեշտէ պատմութեան պահանջմամբ, կաթողիկոսը կ'երթնեկէ անոնց կողմերը, կը տեսակցի իւր հին ուսումնակցաց հետ, և ինքն ու պարսկահայ կղերք տակաւին Յոյներէն կը գնեն իրենց հանդերձներն անգամ³։ Գիտի կը յաջորդէ 478ին իւր եղբորորդին Յոհան Մանգակունի, որոյ աթոռակալութիւնը կը զուգադիպէ Վահանեանց ապստամբութեան, և որոյ կրօնաւական քաղաքականութեան մէջ որ և է փոփոխութիւն չենք նշմարել։ Իւր ճառին մէջ կ'ըսէ՝ թէ «գուրացողան (ածէք) առ արքայութեան ղոնապանն և փակակալ Պետրոս⁴», այն փակակալին՝ զոր իւր նախորդաց ևս քաջածանօթ տեսնը։

Նոյն ինքն Ղազար, Վաղարշապատու ուխտին առաջնորդը, որ այդ շրջանն ու անձինքը կը նկարագրէ մեզ, իւր ջերմ ազգասիրութեան հետ ցոյց կու տայ յու նասիրութիւնն ալ, որոց քով ուսած էր⁵, իւր գրադարանին մէջ յունարէն գրքեր ունէր, և անոնց հարց վարդապետութեամբ կը սնանէր⁶։ Կը յիշէ «սուրբ կարողիկէ և առաքելանման Եկեղեցւոյ» նզովին ու արտաքսելը հերետիկոսները⁷, որով կը հաստատէ ազգին այդ Եկեղեցւոյ հետ դեռ միութիւնը։ Յոյժ կարևոր պարագայ մը, նզովելոց մէջ կը թուէ նաև «զԵւտիքէս կոստանդինուպոլսեցի»։ Ուր և երբ «կաթողիկէ Եկեղեցին» զատապարտեց միաբնակութեան հիմադիրը, եթէ ոչ Քաղկեդոնի ժողովին մէջ⁸։ Ուրեմն այդ վճիռն ընդունող Հայք կը ճանաչէին նոյն ժողովին ուղղափառութիւնն ալ։ Այս պատճառաւ Յունաց և Հայոց մէջ որ և է գոտութեան նշան չկայ դեռ մինչև հոգ։ Անոնց դաւանակցութեան շատ յայտնի ապացոյց մը կ'ընծայէ նաև Մամբրէի

ճառն ի յարոգրիւն Ղազարոս, որոյ լեզուն էր զարու բացարձակ դրոշմը կը կրէ, և յորում յայտնապէս կը կարդանք այս քաղկեդոնիկ սահմանը. «անաւարմին զօրութիւնքն (հրեշտակներ) մարմնաձև երեւեցան, այլ ոչ մարմնացան. սա (Յիսուս) միայն կրէ զերկուս ներգործորինս⁹»։ Այս մասին պիտի խօսինք դեռ յետոյ։

Յ. Իւր 490ին Բարսեղ կ'ընէ Մանգակունւոյն աթոռը. և իւր օրով է՝ որ կը սկսի մատենագրական քան պատմական խառնակութիւնը՝ կրօնական խնդրոց հետ միասին։ Բարսեղնի գործունէութեան երկու աղբիւրներ ունինք. անոր հաւաքական զոյգ թղթերն «ի Պարսս» առ ուղղափառս¹⁰։ Առաջնոյն մէջ կը պատմէ՝ թէ «յութեւտաներորդ ամի կաւառայ արքայի», որ է 506 թուականը, ժողով կը խմբէ «ի Դուին քաղաք», ուր կ'ընդունին պատուիրակութիւն մը Պարսկաստանի և Ասորեստանի կողմերէն՝ իրենց հաւատոյ դաւանութեամբ, որոյ դէմ «Ալկակ և Բարծուս և Մանի և Յոհանն և Պաւլէ և Միքա և այլք նոցին հաղորդը՝ զիեստորի և զԴիողորի և զԹէոդորոսի միաձայնելով զմի ասացուածս», սկսեցէին «պղտորել զյատակ հաւատ ճմարիտ իրրորդութեանն»։ և որոյ համար եկած էին Հայոց օգնութիւնը հայցելու¹¹։ Ժողովն իւր պատասխանին մէջ կը բացայայտէ համառօտիւ Հայոց դաւանութիւնը ու իրրորդութեան ու մարդեղութեան նկատմամբ, և կը յարէ. «Ջայս հաւատ Հոռոմը և մեք Հայք և Վիրք և Աղուանք ունիմք», զոր կը կրկնէ երկրորդ անգամ մ'ալ, հերքելով հակառակ վարդապետութիւնը՝ զոր «ասան նեստորիանոսքն ընդ դէմ մեր, ուժաւորութեամբ զրոց Դիողորի և Թէոդորի և Նեստորի և Թէոդորիայի և Հարայի. կանոն է՝ զոր եղին Ալկակ և Բարծուս և Մանի և Պաւլի և այլ ընկերք նոցուն¹²»։

1. Բզ. 1926, 135. — 2. Փարս. 944-45. — 3. Նոյն՝ 557. — 4. Նոյն՝ 570, 582. — 5. Նոյն՝ 592, 588. — 6. Նոյն՝ 584. — 7. Ընդ Կորնան, 47. —

8. Գր. քրդոց, 41, 48. — 9. Անդ. 2-4, 4. — 10. Անդ. 45, 46.

Չորս բան կ'ուսանենք այս կարևոր յիշատակարանէս: Նախ՝ որ Դուռայ ժողովի խնդրոյ նիւթն է մի միայն հետա-րակոնորիւնը, և չկայ բնութեանց հարց կամ ակնարկութիւն: Երկրորդ՝ իրենց զործը Պարսկաստանի և Ասորոց հեր-ձուածողաց դէմ է, որոնք կը յիշուին մի առ մի: Երրորդ՝ ազոնց մէջ Հայք չեն խառնեք Քաղկեդոնի ժողովոյն և անոր հետևողաց անունները: Զորրորդ՝ անգամ մ'ալ կը հաստատեն յայտնապէս՝ թէ կը շարունակէին դաւանակից մնալ Հոռոմոց ու զրացի ազգերուն:

4. Բարգենի երկրորդ թուղթը կը պատ-մէ՝ թէ Պարսից պատուիրակ մը, Սիմոն երէց, «երկրորդ անգամ» կը դառնայ և կը գումէ՝ թէ ինչպէս «զմարտ պատե-րազմի նորոգելով միւսանգամ Ննստորի», այսինքն նեստորականաց, կը մերժեն ուղղափառ վարդապետաց զրուածները, «ընդ նմին և զառ ի մէնջն»¹, որ է նա խորդ նամակը: Եւ կաթողիկոսն առանց նոր ժողով գումարելու, — հակառակը կը կարծէ Ազգապատմութեան՝ — որով ժողովա-կանաց անուններ ալ չէ յիշե՛ր՝ ինչպէս կը յիշէ առաջնոյն մէջ, յանուն ազգին կը կրկնէ այն «զոր և զբեհագ իսկ ձեզ յառաջագոյն»²: Այս թղթին մէջ սակայն երկու անգամ կը մտնէ Քաղկեդոնի ա-նունն ալ, մին հոն՝ ուր կ'ըսուի՝ թէ նախանձի պատճառաւ «ալեկոծեալ սուրբ եկեղեցի, ի ժողովոյն Քաղկեդոնի զօրացեալ, սկիզբն առնելով ի Նեստորէ չարիմաց խորհեցողէ՛ յաղաքս սրբոյ Երրորդութեա-նը»³, և միւսը՝ թէ «սխալ չիմք ուրացեալ զ'ի Քաղկեդոնի հետևութիւն Նեստորի և այլոցն նմանից»⁴:

Քաղկեդոնի այս յիշատակութիւնը, զորս իբրև վաւերական ընդունեցան Է. վ. Տէր Մկրտչեան⁵, Օրմանեան⁶, Թ. Թոփճեան⁷, Տուռնըրիզ⁸ և այլք, յետամուտ յաւելուած-ներ են ու փաստերն ակնեւ: Կաթողիկոսը

վկայեց՝ թէ այս թղթին մէջ կը զբաղի առաջնոյն հարցով (նեստորականաց), և թէ կը կրկնէ նախկին զրածը: Եւ որով-հետեւ նախորդին մէջ Քաղկեդոն մաս չու-նէր, ապա հոգ ալ չէր մտնէր: Միանգա-մայն ողջմտութեան դէմ է առաջին յա-ւելուածը, որ Եկեղեցւոյ ալեկոծութիւնը նախ կը զօրացնէ և յետոյ սկսիլ կու տայ Նեստորով: Տգէտ խանգարողդ այդ քա-ցատրութիւնը փոխ առեք է վրաց Պետ-րոս եպիսկոպոսի թղթէն (606ին), ուր կ'ըսուի՝ թէ Եկեղեցին ֆեստացեալ «քա-կըսեալ ի Նեստորի մոլորութենէն և հաս-տատեալ ի Քաղկեդոնի ժողովին»⁹, և ասոր կարգն աղաւաղեք է: Անտեղի է երկրորդ յաւելուածն ալ, որով իբր թէ Բարգէն կը հարուածէ «զ'ի Քաղկեդոնին ստութիւն Նեստորի»¹⁰, որ կը նշանակէ՝ թէ պայքարը կ'ուղղէ ոչ բուն նեստորականաց, այլ նեստորամիտ Քաղկեդոնի դէմ, ինչ որ բոլորովին օտար է Պարսից խնդրին, և հայ նամակագրին նպատակէն և նիւթէն: Խարդախողն անգամ մ'ալ կը մասնէ ինք զինքը, մոռնալով հիւսել Քաղկեդոնի ա-նունը հերձուածողաց կարգին, զորս կը թուէ և կը նզովէ կաթողիկոսը: Ոչ ալ ուղղափառ վարդապետաց մէջ կը խառնէ Քաղկեդոնի երկու մեծ հակառակորդները, Դիոսկորոս և Տիմոթէոս Կուզ¹¹, զորս յե-տոյ բուն հակաքաղկեդոն Հայք սեղան-ներու վրայ պիտի հանեն: Ուստի Բարգէն մաս չունի յիշեալ թշնամանաց մէջ:

5. Հայրապետս աթոռ ելաւ Զինոնի հետևորդներէն ութ տարի վերջ, ուր քաղա-քականութիւնը և Յունաց հետ դաւանա-կցութիւնը կը պահանջէին՝ որ համակրու-թիւն ցուցնէր անոր, կոչելով՝ «զթուղթն Զինոնի բարեբանելոյ թագաւորին Հոռո-մոց», զոր համաձայն կը գտնէր — և էր իսկ դաւանութեան մասամբ — ս. Հարց վարդապետութեան, զոր և Հայք կը դա-ւանէին¹²: Պատշաճ էր նոյն հայրապետին

1. Գր. բրդոց, 48. — 2. Ազգ. 505, 510. — 3. Գր. բրդոց, 51. — 4. Անդ՝ 48, 49. — 5. Արտ. 1898, 434. — 6. Ազգ. 505, 509. — 7. Լոյս, 1905,

834. — 8. Tourn. 823. — 9. Գր. բրդոց, 101. — 10. Անդ՝ 50-51. — 11. Անդ՝ 49.

նաև զգուշանալ յիշատակել ֆաղկեղտնի ժողովն երեք նախորդաց հետ, ինչպէս զգուշացեր էր հեղափոխական ալ, առանց յայտնի դատապարտելու զայն: Այդպիսի ժամանակ մը կը նար Բարգէն՝ եթէ ուզէ՝ նաև համարձակապէս զրկել և ողորդել նոյն ժողովին դէմ, ինչպէս առանց մեղադրուելու կայսերէն՝ կ'ընէին ուրիշ շատեր, սկսեալ Կոստանդնուպոլսի պատրիարքէն: Ինչ կը նշանակէ ուրիշն Հայոց կաթողիկոսին զգուշաւոր ընթացքը: Այս միայն՝ թէ Բարգէն շատ հաւանօրէն իւր սրտին մէջ կը շարունակէր պահել նոյն ժողովին հանդէպ յարգանքը, զոր ցուցեր և աւանդեր էին իւր նախորդները:

6. Ասկայն թուականէս դար մը վերջ (608թ) Արքանամ կաթողիկոս առ Կիւրիոն թղթոց մէջ նոր տեղեկութիւն մը կու տայ Բարգէնի մասին, որպէս թէ աւոր օրով քաղկեդոնեան վէճը կը յուզուի նաև մեր աշխարհի մէջ. և թէ նա ի ժողով կը գումարէ իւր եպիսկոպոսաց հետ վրաց կաթողիկոսը Գարբէլ՝ 23 եպիսկոպոսներով և Աղուանները, և կը նշուին ֆաղկեդոնի ժողովն ու Լևոնի տումարը: Այդ իսկոն ժողովին զորքը, կ'ըսէ, կը գտնուէր «Պայման նամակին» մէջ, որ իւր թէ նախ հայերէն գրով էր, Հայոց ապստամբութեան ժամանակ կը կորնչի, և Ուռնայի մէջ վերստին կը թարգմանուի «ի հոռոմ գրոյ, քանզի և նոքա ունէին ի մէնջ». և թէ ստոյգ ալ չէին կրցած թարգմանել եպիսկոպոսաց անունները, զորս ճշդելը Կիւրիոնի կը թողու: Այս գրուածն Արքանամու նախորդին՝ Մովսիսի օրերն ալ կար, զոր նա 601ին կը յիշեցնէր նոյն Կիւրիոնի, գրելով՝ թէ «ի ժամանակս Կալատայի արքայից արքայի խնդիր եղև քննութեան հաւատոց, և Հոռոմը զֆաղկեդոնին ընկալան զհաւատս, և մեր աշխարհս և ձեր հրաժարեցին և

հեռացան, և դեռ ևս զրով կայ և պահի մեր և ձեր միաբանութիւն հաւատոյ»⁹. Խօսքեր՝ զորս փոխ առած կը կրկնէ Արքանամ: Ասոր կ'ականարկէր նաև Մովսիսի տեղապահը Վրթանէս քերթող 606ին՝

Չարմանալի չէ՝ որ այդ տեղեկութիւնն ընդունէին ու կրկնէին յետոյ միջնադարեան գրիչներ, Գագիկ Արծրունի՝ և Յովհաննէս պատմիչ, սա՝ ժողովը Վաղարշապատու մէջ դնելով¹⁰, Կաղանկատուացոյն շարունակողը՝ նոյն շրջանէն՝ աղուանաբար կը գրէ այսպէս. «Յետ հարիւր և ութսուն ամ լցելոյ հաւատալոյն Հայոց՝ յաղագս ժողովոյն ֆաղկեդոնի եղև հանդէս ժողովոց ի ժամանակս Բարկենի Հայոց կաթողիկոսի: Յոյնք և ամենայն իտալիա, Հայք և Աղուանք և Վիրք միաբանեալ՝ նզովեցին զժողովն ֆաղկեդոնի և զտումարն Լևոնի՝ հրամանաւ բարեպաշտ թագաւորացն Հոռոմոց՝ Չենոնի և Անաստասայ՝ իտալիան ևս կը նզովէ զֆաղկեդոն ու զԼևոն. արդարև ինչ խելացի պատմագիր Միջնադարեանց վրատահացած, Բարգէնի հակաքաղկեդոն ժողովին հաւատացին՝ թուականին մէջ անմիաբանութեամբ՝ նաև Չամչեան¹¹, Տէր Միքելեան¹², Գաթրճեան, և անոր հետեւելով՝ նաև Հ. Ն. Ալինեան¹⁰, եւրոպացիք ոմանք, ինչպէս Հերզոգ¹¹, ուսկից և Լաբուր¹³, Լ. Պրախտ՝ հետեւելով Յ. պատմագրին¹³, և այլք: Օրմանեան նոյնպէս ընդունեցաւ ու միացուց՝ առ Պարսս երկրորդ նամակին առթիւ իւր ենթադրած անգղ ժողովին հետ¹⁴, մինչ Կ. վ. Տէր Մկրտչեան զայն խառնեց 506ի ծանօթ ժողովին, բայց չընդունելով՝ թէ անոր նիւթը քաղկեդոնեան հարցն էր¹⁵:

Իսկ ես այդ ժողովը և անոր ընծայուած վերոյիշեալ պայման նամակն անհիշեալ ու ստեղծական կը գտնեմ: Չի նախ հակառակ է Բարգէնի մեղմ քաղաքականու-

1. Գր. բրդոց, 46, 50. — 2. Ան.՝ 182-88, 164, 177. — 3. Ուսմ. Բ, 10. — 4. Գր. բրդոց, 130. — 5. Ան.՝ 800. — 6. Թ. Կթ. 81. — 7. Կաղանկ. 214. — 8. Զամ. Բ, 225, 490. — 9. Տէր Միքել. 97. —

10. Հագ. ամ. 1908, 169. — 11. Realeuoykl. II, 78. — 12. Labourt, 140. — 13. Vacant, I, 1996. — 14. Ագգ. 504-5. — 15. Արք. 1898, 435. 1902, 882.

թեան և փաղկեղոնի նկատմամբ զգուշաւորութեան՝ զոր տեսանք: Յետոյ՝ առասպելական հանգամանքներ են յիշեալ նաւակին կորնչիլը, յունարէն լեզուով վերստին գտնուիլն օտար քաղաքի մը մէջ ու թարգմանութիւնը, և անուանց անճշդութիւնը: Երրորդ՝ կարծեցեալ ժողովին մասնակից Վրացիք ալ չունէին անոր պատճէնը, որ անհրաժեշտ էր իրենց քով ևս գտնուիլը, ինչպէս ունէին իսկական ժողովիւնը¹. և ոչ ալ կիւրտն տեսած էր զայն, այլ միայն «զիտեմը», կը գրէ առ Մովսէս, զի այնպէս եղէ, որպէս շագոմաւնցաւ լսեալ եմք²: և կեղծ գրոյց մ'էր ուրեմն՝ որ ստեղծեր էր այդ ժողովը, շփոթելով Դունի ծանօթ ժողովին հետ, և կերտեր անոր գրութիւնն ալ, որ զժողովը հակառակ Հոռոմոց կը դնէ, մինչ ինքն Բարգէն գՀայա դաւանակից նշանակեց անոնց, և այնպէս ալ մնալու էին մինչև իւր մահը, յետ որոյ միայն փոխուեցան Յունաց կրօնական հանգամանքները: Դիտելի է՝ որ թորոց գրոց — արդէն կազմուած ու ծանօթ ժ դարուն՝ — խմբագրիչն ևս չընդունեցաւ այլոց մէջ նոյն ժողովին կեղծ գրութիւնը, և Սակս ժողովոց շարադրութիւնն ինքնին մի միայն ժողով կ'ընծայէ Բարգէնի՝ նեաւորական խնդրին առթիւ, յիշելով անոր հարազատ առաջին թուղթն ալ՝ և Կ. Վ. Յէր Մկրտչեան նոյնպէս չընդունեցաւ Բարգէնի հակաքաղկեղոն ընթացքը, և ըսաւ՝ թէ անոր օրով հայ եկեղեցին «լեռնայն միայն դատապարտել է» զփաղկեղոն³, ինչ որ որքան դիւրաւ ըսուած՝ նոյնքան ալ անապացոյց է:

7. Բարգէնի կը յաջորդեն՝ հաւանական թուականօր՝ Սամուէլ արծկեցի (516-526), Մուշէ ալարեբցի (526-534), Սահակ ուղկեցի (534-539), Քրիստափոր տիրապիւնցի (539-545) և Ղևոնդ եռասուեցի (545-548), որոց անունները միայն գիտենք

միջնադարեան գրիչներէ, իսկ գործոց կամ հակաքաղկեղոնութեան մասին լուսութիւն է: Թովմա արծուունին Քրիստափորի համար կը պատմէ՝ թէ Ասորոց, Խուժաստանի և այլ կողմերու ուղղափառաց կը գրէ, «զգուշացուցանելով մի խառնել ընդ նեաւորականն»⁴, և այսպէս: Կը խորհիմ՝ որ աղոնց օրով հայայոյն պայքարը փաղկեղոնի ջուրջ՝ տակաւին չէր արթնցած, ապա թէ ոչ՝ որ և է յիշատակարան մը մնացած պիտի լինէր թորոց գրոց մէջ: Հայապետացող օրով արդէն կրօնական խաղաղութիւնը հաստատուած տեսանք կայսերութեան մէջ Յուստինոսի ժրութեամբ. և մերոց, որ դեռ չէին զատուած Յոյներէն, ուրիշ բան չէր մնար՝ բայց հետեւի այդ նոր քաղաքականութեան՝ քաղկեղոնեան խնդրոյն մէջ: Այս պատճառաւ Մովսէս և Արաբհամ, որ իրենց նախորդաց քով փաստեր կ'որոնէին Փաղկեղոնի դէմ, Բարգէնի կեղծ ժողովին յիշատակն ու յիշատակարանը միայն գտան, և ուրիշ ոչինչ: Երկուց բնութեանց հակառակ ծանօթ ճառը, «ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ՝ Հայոց կաթողիկոսի և մեծի թարգմանչի»⁵, գրուած յետ Խորենացուցն՝ ուստի կ'աւանու Արքաբու անուան մեկնութիւնը, «որ թարգմանի աւագ այր»⁶, սովորաբար կը հեռացուի վերոյիշեալ Ուղկեցիէն⁷, որ անդորրութեան՝ և ոչ կուրի ջրջանը կ'ապրէր:

8. Ղևոնդի կը յաջորդէ Ներսէս աշտարակեցի (548-557), որոյ օրով կը նորոգուի Բարգէնի պարսկահայ խնդրը, այս անգամ ուղղափառ Ասորոց կողմանէ: Թորոց գիրքը կը պահէ ասոնց թղթակցութիւնը Հայոց հետ: Սամուէլ քորեպիւկոպոս և խումբ մը վանահարց պատուիրակութիւն մը կը յղեն առ Հայա ու կը գրեն՝ թէ «եմք մեք յաշխարհի հերձուածոց զաց», որոց հալածանքներէն ազատելու համար՝ իրենց սեպհական եպիսկոպոս մը

1. Գր. քորոց, 51. — 2. Ուս. Բ, 13. — 3. Սա՝ 226. — 4. Ուս. Բ, 14, 23, 45, 46. — 5. Գր. քորոց, 220-21. — 6. Արթ. 1906, 892. — 7. Արթ.

88. — 8. Գր. քորոց, 418. — 9. Աղ՝ 414. Խորեն. Բ, 14. — 10. Հմմտ. Օրման. Աղթ. 528. Տէր Միշաս. 290, և այլք:

կը խնդրէին. միանգամայն կը պարզէին իրենց զաւանութիւնը, նզովելով հերձուս, ծողները, որոց մէջ նաև գծողովն փաղկեղունի և զտումարն լիւնի¹ և Պատուիրակներէն Արդիսոյ կը ձեռնադրուի, կ'երթայ իւր երկիրը և կը զրէ Հայոց՝ թէ հակառակորդը սարսափեցան, լսելով թէ «նզովեցէր զմուրը վարդապետն խարէութեան զնատոր պեղծ, և զթէնդորոս և և զԴեռդորոս և զթէնդորիտոս, և զծողովն փաղկեղունի և զտումարն լիւնի, և զլիւերիոս և զգիրս իւր ապականութեանն»։ Արդիսոյ երկրորդ անգամ կը զրէ, յիշելով հոն գործող երեք զասեր, «զպեղծն Նիւտոր, և զծողովն փաղկեղունի և զլիւերիոս»։ և դասակարգելն մէջ կը նզովէ հերետիկոսները, որոց հետ նաև զփաղկեղուն ու լիւնն, «զի ասացին երկուս բնութիւնս և երկուս դէմս Գրիստոսի յետ միաւորութեանն»։

Ասոնց փոխարէն կայ նամակ մը Ներսէս կաթողիկոսէ՝ Մամիկոնէից Մերշապուն հպիսկոպոսին հետ, ի պատասխանի Ասորոց առաջին թղթին, որոյ դաւանութենէն ստուար կտոր մը մէջ կը բերեն՝ փաղկեղունի և լիւնի ակնարկութեամբ հանդերձ², և կը յարեն. «նզովեմք և մեք հանապազ զուրացողսն, և զնատորիոս» և զանազան անուններ, «և զԱլպողիւսրիս և զտումարն լիւնի»։ յետոյ ուրիշ անուններ, «և զթէնդորիտոս և զանթրեմ ժողովն փաղկեղունի, և զթշնամանօք և զանյիշելի բռնադատեալ կանոնսն ի նոցանէ» և այլն³։

Վաւերական են արդեօք այդ յարձակմունք փաղկեղունի դէմ, և հանրէ է ընդունիլ Հայոց պաշտօնական բաժանումն Աշտարակեցւոյն ձեռքով։ Օրմանեան չկասկածեցաւ թղթոց մասին⁴, Նոյնպէս և Թովեման⁵, Բայց եւ իրաւացի կը գտնեմ հարցնել, յետ անգամ մը նշմարելու ցեղի ներկայութիւնը Թորոց գրոց մէջ։ Ոչ այս-

չափ միայն, այլ Արդիսոյ կը պատմէ՝ թէ թուած բոլոր հերձուածողը, որոց մէջ և քաղկեդոնականը, «ժողովեցան առ միմեանս, որպէս զի տացեն ընդ մեզ պատերազմ. խորհեցան ընդ միմեանս վասն իմ» և այլն⁶։ Արդ՝ Բնչպէս կարելի է հաւանիլ՝ որ քաղկեդոնականը իրենց դատաւարտած նեստորականաց և ուրիշ աղանդաւորաց հետ միարանէին այդ ասորի «ուղղափառաց» դէմ։ Եւ դարձեալ այդ պարսկային աշխարհաց մէջ, որ Եկեղեցիէն հաւանեալ բոլոր շարափառաց ապաստանարան էին, և ուր ապաւինած ու զօրացած տեսանք եւտիքեաններն ալ⁷, Բնչպէս կրնային քաղկեդոնականը այդպէս բռնանալ ու ճնշել իրենց հակառակորդները։ Այսպիսի արտառոց զաղափարներ կրնային ստեղծուիլ թղթոց միջնադարեան անգիրտակից օրինակողի մ'ուղեղին մէջ, և խառնել փաղկեղունի անունն ամէն տեղ. բայց մեզ դիւրին չէ կուլ տալ։ Արդէն Արդիսոյ ինքնին կը զրէր Հայոց՝ թէ «ատեցէն և հալածեցէր և նզովեցէր զըմբռնեալսն ի չար մտածութեանն Նեստորի նզովելոյ, զի մի՛ ապականեցեն» ձեռք ըրիւստական հաւատքը⁸։ և հոգ քաղկեդոնեանց անունը չկար ու չի տեսնուի։

9. Այս միջոցիս կը հանդիպի Մամիկոնեան Վարդանայ ապստամբութիւնը Պարսից դէմ, ապանելով բռնակալ Սուրէն մարզպանը, և երթալով Յունաց հպատակութեան մոնելով՝ ըստ Սեբէոսի⁹։ Կոստանդնուպոլիս կը հասնի, կ'ընէ Ասողիկ, ընտանեօք և իշխանակցօք, և «յանդիման լինէր Թազաւորին Յուստինոսոսի՝ որ ըզսուրբն Սոփիա շինեաց»¹⁰։ Սեբէոս¹¹ Խոսրովու 41 տարւոյն (572) և Ասողիկ՝ յիշեալ կայսեր 9ին (536) կը գնեն այդ դէպքը. Փոտ՝ «ի Ժէ ամի» Յուստինիոսնոսի (544), և յոյն գաւազանագիրը՝ Խոսրովու 40ին (571) և Յուստինիանոսի 30ին (557)։ 571ն ընդունեցան նաև

1. Գր. Բորոց, 52-58, — 2. Անդ՝ 60, — 3. Անդ՝ 62, — 4. Անդ՝ 67, — 5. Անդ՝ 56, — 6. Անդ՝ 56-57, — 7. Արդ, 538, — 8. Լյոս, 1905,

884, — 9. Գր. Բորոց, 60, — 10. Անդ՝ 226, — 11. Գր. Բորոց, 62, — 12. Սեբ. 47, — 13. Անդ, 85.

Ձամչեան և Օրմանեան, սա՛ր Յովհաննէս զարեղենացւոյն հայրապետութեան հանդիպեցնելով զայն, և որուն նոյն կաթողիկոսը մասնակից ալ համարեցաւ Հ. Ա. Կիրնեան, իայց բոլորդ ալ սիւղեցան թէ՛ թուականաց և թէ՛ Գարեղենացւոյն նկատմամբ: Վարդանայ երթը կապուած է կոստանդնուպոլսի 553ի ժողովին հետ, ինչպէս պիտի տեսնենք. որով իւր գործն էր արդարև Ա. Յուստինիանոսի հետ (527—565), որ իսկապէս Ս. Սոփիան շինեց և յիշեալ ժողովը գումարեց, իսկ Յովհաննէս զարեղենացին 553էն չորս տարի վերջ կաթողիկոս նստաւ: Ըստ այսմ ուղիղ է նաև Վարդան պատմչի հաշիւը, որ Մամիկոնեանի ապստամբութիւնը կապեց Ն. Աշտարակեցւոյ շրջանին հետ՝ (548—557):

Որդ՝ Մամիկոնեանը հազիւ հասած, կը գրէ Ասողիկ, անխորոթեամբ մը ս. սեղանին կը մօտենայ կայսեր հետ: «Հաղորդի ընդ նմա օրինաց, և յիւր անուն աւետանէ (կայսրն) զաւագ զուռն սուրբ Սոփիայ, որ մինչև ցայսօր կոչի զուռն Հայոց»։ Իսկ յոյն գաւազանագիրը, — հրատարակուած նաև յանուն կեղծ «Սա. հակայ Հայոց կաթողիկոսի», — զոր Ժ դարու գործ համարեցանք, — զոր Ժ դարու գործ համարեցանք, կ'ընդլայնէ դէպքն այսպէս: Վարդան, կ'ըսէ, «զատանէր ի հաղորդութենէ նորին՝ հանդերձ ընկերօք իւրովք. ասէր չունել հրաման ի վարդապետաց իւրոց հաղորդելոյ ընդ նմին: Սիին իրի հրամայեաց կայսրն նմին վարդանայ ժողովիլ զեպիսկոպոսունս և զվարդապետս Հայոց: Ապա եղև մեծ ժողովն կոստանդնուպոլսի՝ ընդդէմ հերետիկոսաց ամանց, զոր և հինգերորդ ժողովն կոչեմք. յորում հասնեալ նոցա, զարաւզան զրունսս որոնց Սոփիայ յանունն նոցին կոչեցին, և մինչև ցայսօր կարդան

զուռն Հայոց»։ Նոյնը կը հաստատէ և փոստ այսպէս. «Ի տօնի սրբոյ Խաչին ի հաղորդութենէ ի բաց եկաց (վարդան), ասելով՝ թէ վարդապետք մեր ոչ հրամայեցին մեզ», և կայսեր հրամանաւ կը գումարուին 130 եպիսկոպոսներ, «և Հայք ընդ նոսին, և ձեռնադրով զօղովն Գաղիկոսի ընկայան»։

Այս Ե տիեզ. ժողովը ծանօթ է զանազան մոլորչաց դէմ, կատարուած 553ին, Յուստինիանոս կայսեր զործակցութեամբ, և Աշտարակեցւոյն օրով: Սիւնհոդականաց ցուցակին մէջ կ'երևին ներկայիս երեք յունահայ եպիսկոպոսներ. Կիրակոս Ա. Թայ (Տիգրանակերտի), Գրիգոր Յուստինիանուպոլսի Հայոց (Եկեղեցաց գաւ. մէջ¹⁰), և Հռուփոնոս Սեբաստիոյ Հայոց¹¹, Սա. կայն փոտի և գաւազանագրին խօսքերը կը պահանջեն մեծագոյն թիւ մը, և ուղղակի արեւելեան կողմէն, որոց հետ հաւանօրէն առանձին ըննուեր է քաղկեդոնեան հարցը և զատ արձանագրութիւն մ'ունեցեր, և թէ այդ է փոտի յիշած — հաւանօրէն և տեսած — ձեռնագիրը: Նոյն տիեզ. ժողովին մէջ կարդացուեցաւ նաև ս. Սահակայ առ Պրոկղ թուղթը թէ՛ ողմոպսունեստացւոյն դէմ¹², իբրև իրենց դաւանակից եկեղեցւոյ մը խոստովանութիւնը:

Եթէ ստույգ է վարդանայ նախկին խորշումը, — զոր Ասողիկ չէ յիշեր, — և ապա ձայնակցութիւնը ժողովին՝ մեր եպիսկոպոսաց հետ, պիտի հետեցնենք՝ որ մեր մէջ սկսած էր արդէն զօրաւոր հոսանք մը փաղկեղունի դէմ, առանց դեռ վերջնական խզման յանգելու, որով կրնային հող համաձայնութեան զալ քաղկեդոնականաց հետ: Չայս կը հաստատէ յոյն գաւազանագիրն ալ, շարունակելով այսպէս. «Դարձ արարեալ նոցա ի Հայաստան, կէսք արդարեւ վաղվադակի և փու-

1. Ձամչ. Բ. 284. Աղսպ. 564. — 2. Հմեք. ամս. 1908, 836. — 3. Վրն. 57. — 4. Ասող. 85. — 5. P. G. 132, էջ 1237. — 6. Բզմ. 1926, 164. — 7. Comb. 278. P. G. 1245. — 8. փոստ առ Ձագ. — 9. Հմմտ.

Vacant, VIII, 2281. Պատմ. ժող. 349. — 10. Հմմտ. Ինճեմ. Ստոր. 11. — 11. Mansi, IX, 176, 177. — 12. Սեդ. 240.

թոյ պնդութեամբ զհետ եղին միութեան (միւս հակառակորդաց), և կէսը յետս կացին և զատեան յառաջ Յովսէփէի կաթողիկոսի»։ Ուրեմն բոլորն ալ հաւատաւորիմ ձեացին իրենց յանձնառութեան՝ Ներսիսի օրով, ինչ որ փաստ մ'է անոր նաւորդամութեան քաղկեդոնեաց հանդէպ, և մեծագոյն համարձակութեան զոր կը վայելէին անոնք ի Հայաստան։

10. Աւելին կայ։ Ներսէս ունի իւր ժողովն ալ ի Դուռնի «ի Խրիստոսի խորհրդոս արքայից արքայի» ըստ արձանագրութեան, որ է 555 թուականին։ Շատ վաղուց, այն է ժողովէն 52 տարի վերջ, Երուսաղեմի թովհաննէս արքեպիսկոպոսն առ Սրապիթիւն քիչ՝ «առաջնորդ կորստեանն Հայոց և կամ ժողովին Հայոց» կը կոչէ զԱրքիշէպ¹, որ նոյն ժողովին մասնակից էր²։ և ուսկից յետոյ ժ դարուն առնլով՝ կը կրկնէ փոքտ և առ Զարարիա թղթին մէջ³, և յոյն գաւազնագիրը⁴։ Մերոցմէ Սահկ ժողովոց սխալաշատ գրուածն այդ ժողովը նոյնպէս համարեցաւ հակառակ ժողովոյն փաղկեղոնի⁵, որուն հաւատաց Ասողիկ ալ⁶, և նորեքն ոմանք, Կ. Վ. Տէր Մկրտչեան⁷, Տէր Միքիլեան⁸, Պըտիս⁹ և Տուռնրբիդ, վերջինն անոր վերագրելով Հայոց պաշտօնական և առաջինն րաժանումը¹⁰։ Բայց աղոնք բոլորը խաբուած էին, Մեր ունինք այսօր յիշեալ ժողովին արձանագրութիւնն իսկ, որ միւսի վստահելի աղբիւրն է, ինչպէս խորհեցաւ և Օրմանեան¹¹, և նոյն աղբիւրէն կ'ուսանինք զուսմարման ստոյգ նպատակը։

Ժողովէն յառաջ՝ Ներսէս շրջաբերական մը հանեց առ եպիսկոպոսունս, «վասն անիծեալ խաժկաց նեստորականաց, որ Ե. կեալ րնակեցան յաշխարհիս մերում» պատճառաւ վաճառաշահութեան¹²։ Յոյց տուաւ կրօնական վտանգն անոցմէ, և ի ժողով հրաւիրեց՝ ճակատելու համար անոնց

դէմ։ Դումարուեցան անոնք «վասն չար աղանդին խաժկաց նեստորականաց» միայն, որոց շահաւատկութիւնը կը պատմէ ժողովին յիշատակարանը. դատապարտեցին զանոնք, քանդեցին «զտեղի ապաւինի անօրէնութեան նոցա», և վճռեցին ամէն կողորդութիւն խզել անոնց հետ¹³, ինչ որ ծանուցուեցաւ թղթով նաեւ քացակայ և պիսկոպոսաց¹⁴։ Եւ այդ ժողովին մէջ ոչ մէկ խօսք կամ ակնարկութիւն կայ փաղկեղոնի դէմ։ Եթէ Հայք հող և կամ յառաջագոյն հակառակ լինէին Դ. տիեզ. ժողովին, մի՞ թէ կընային լռել այդ տեղ անոր դէմ, որոյ հակառակորդները զայն իբր նեստորական կ'ամբաստանէին, և իւրենք զումարուեցան ուղղակի նեստորականաց դէմ։ Ոչ, մեր վաւերական յիշատակարանը անբնական են հաստատելու՝ թէ Հայք Աշտարակեցոյն օրով կամ յառաջ արդէն պաշտօնապէս զատուած էին միւս եկեղեցիներէն։

11. Երկու թղթեր կան Ներսիսի յաշխարհի Յովսէփէի քաղկեդոնացոյ (557-574)։ Մին գրուած է «առ Սիրեանաց եպիսկոպոսն և առ տէրն», յորում կը խօսի Աշտարակեցոյն յիշեալ ժողովի մասին, որուն ինքն ալ մասնակցեց էր, թէ «յետ ի խոր խաղաղութեան», անցնելու Հայաստանեայց միով հաւատով, «ի ժամանակիս յայսմիկ՝ Նեստորի անիծելոյ, որ կուրացոյց չարահաճաւ հերձուածոն իւրով զկղմանս խուժաստանի, երեւեցաւ խմոր չարութեան և յաշխարհիս մերում»։ և յիշեալ ժողովին մէջ, կ'ըսէ, «զպեղծ նեստորիանոսս և զքաղկեդոնիստս և զայլ հերձուածոցս ի մեր սուրբ եկեղեցոյս նձովիւր հալածական արարաք»¹⁵։ Բայց նոյն ժողովին վաւերական յիշատակարանին մէջ ոչ ինչ կար հակառակ փաղկեղոնի հետեւարար «և զքաղկեդոնիստս» սուտ և նորամուտ է։ Այս պատճառաւ խան-

1. Արք. 1896, 252. — 2. Գր. Բարս, 73. — 3. Փոս առ Զար. — Տէր Միքիլ. 110. — 4. P. G. 132, էջ 1243. — 5. Գր. Բարս, 221. — 6. Արք. 83. — 7. Արք. 1896, 254. — 8. Տէր Միքիլ. 108.

— 9. Vacant. I, 1896. — 10. Tourn. 90. — 11. Արք. 546. — 12. Գր. Բարս, 72-75. — 13. Արք. 76. — 14. Արք. 78-79.

գարիչը կը մոռնայ յաւելուլ նոյնը հոն՝ ուր նամակագիրը կը յիշէն «զպեղծ նեստորիանսսոյ և զայլ հերձուածողս որ յաշխարհիդ ձերում են»¹։ մինչ յետոյ դարձեալ կը խառնէ զայն՝ երբ հերձուածողներէ դարձելոց պայման կը դրուի՝ «նզովել զրով զպեղծ Նեստոր և զամենայն հերձուածողս և զժողովն Քաղկեդոնի»²։ ուր յիշատակութեան ձեզ իսկ անտեղի է։ զի թղթին շարադրողը զՔաղկեդոն ուզելով յիշել, զայն ղնելու էին յետ «Նեստորի», և ոչ թէ «զամենայն հերձուածողս» համառութենէն վերջ, ուր աւելորդ կը լինին ուրիշ անուններ, ինչպէս նախորդ «զայլ հերձուածողս» ալ մնացեր է առանց շարունակութեան։

Թանգարիչ ձեռքը կը մտնէ նաև Յովհաննու երկրորդ թղթին մէջ՝ «առ Աղուանից եպիսկոպոսունս», դարձեալ նեստուրականաց դէմ, որ հոն քարոզութեան գնացեր էին «ի վանաց պղծոյ Պետրոսի՝ որ անուամբ Աղքատասէր կոչի»։ և խանգարիչը կ'ընէ հետեւեալ միջարկումները. «ոմանք զայլը յափշտակողք» երթալով Աղուանա, «զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանն յոգիս անմեղաց»։ և յետոյ յանուանէ յիշատակեալ հերձուածողաց կարգին մէջ ևս կը կրկնէ՝ «և զսևոտի ժողովն Քաղկեդոնի և զտոմարն Լևոնի»³։ Ասոնց օտարութեան փաստերը զանազան են։ Նախ՝ անտեղի է Պետրոսի նեստուրական վանքի միանձանց բերանով քարոզել տալ զՔաղկեդոն՝ որ նզովեց զՆեստոր իրկրորդ՝ Աղուանք մեզ հետ ի սկզբանէ քաղկեդոնական էին, և այնպէս ալ մնացին, և այդ պատճառաւ զատուեցան ևս Հայերէն, երբ ասոնք Գաբրիէնացւոյն յաջորդին օրով բաժնուեցան Յոյներէն, ինչպէս պիտի տեսնենք. որով հակապատմական ու տգիտական է խանգարիչիդ կարծեւը՝ թէ Աղուանից մէջ այս պահուս նոր կը

քարոզուէր քաղկեդոնեան վարդապետութիւնը։ Երրորդ՝ առ Աղուանս թուղթը մտեր է նաև անոնց պատմութեան մէջ, որոյ էմինանս հրատարակութիւնը, կատարուած ըստ կրկին օրինակաց, չունի յիշեալ միջարկութիւնը⁴, որոնք եթէ լինէին բնագրին մէջ, պատմիչը՝ որ ինքն ալ հակաքաղկեդոն մ'էր, չպիտի ջնջէր զանոնք, իսկ շահնագարեան հրատարակութիւնը, ինչպէս նաև Ս. Ղազարու կրկին նոտագիր օրինակները, որոնք մի և նոյն աղբիւրէն են, ունին զանոնք, թայց թղթոց գրքեւ տարբեր ձևերու ներքեւ. «զժողովն Քաղկեդոնի», և «զսևոտի չար ժողովն Քաղկեդոնի և զհրէական տոմարն Լևոնի»։ կը հետեւի՝ որ երկրորդ խանգարիչ մ'էր սա, որ կը ճանաչէր թղթոց գրոց յետոյ աղաւաղուած օրինակը, և աւերով թեւադրուած՝ ուզեց զայն գերազանցել հայհոյելու մէջ, և յոռեգոյն լուսանները սարդեցուց կաղանկատուացիէն ներս, ոչ միայն հոգ, այլ ամէն անգամ որ յիշուեր է Քաղկեդոնի անունը։

Վերջապէս շատ ակնեղ է Յովհաննու թղթոց մէջ չորրորդ տիեզերական ժողովոյն անյարմար յիշատակութիւնը, զոր իր հարազատ ընդունեցան դիւրութեամբ նաև Օրմանեան⁵, Թօփեան⁶, Տէր Մինասեան⁷, և Տէր Միքելեան⁸, որոց վերջինս խօսեցաւ առ Սիւնիս նամակին վրայ, ըստ օրինակին Օրբելեանի⁹, որ նոյնպէս խանգարեալ թղթոց գրքեւ առնուած էր։

12. Մոյն մատենիս մէջ կայ ճառ մ'ալ՝ վերնագրով. «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի՝ ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն և կամ մի բնութիւն»¹⁰։ Հիւլլենարան լեզուն հեռի է Յովհանն Մանգակունւոյ բարբառէն, և յուզած նեստուրական խնդիրն՝ անոր ժամանակէն, որ վերոյիշեալ «խոր խաղաղութեան» շրջանին կը պատկանի։ Ոճը շատ տարբեր Ոճ. Օմնեցիէն, որ արդէն ունի

1. Գր. բարոց, 79. — 2. Անդ՝ 80. — 3. Անդ՝ 81, 88. — 4. Կաղանկ. 95, 97. — 5. Հոս. Ա. 228. — 6. Արք. 560-61. — 7. Լոյս, 1905, 834. — 8. Տէր

Մինաս. 115. — 9. Տէր Միքել. 108. — 10. Օրբել. 67, 69. — 11. Գր. բարոց, 29.

իւր յատուկ շարադրութիւնն ալ նոյն նիւթին նկատմամբ: Եւ զաղափարն ու ժամանակն ստար են ՅՃ. պատմագրի շրջանէն: Հետեաբար ամէն մասամբ կը համաձայնի Գաբրիէնացւոյն և անորն է մեր ճառը:

Իւր խօսքը կ'ուղղէ բնութեանց նեւ. տորական բաժանման դէմ, որ կը քարոզէր «այն ումն զԵրուսն գոլով արտակրելի, և այն զՔրիստոսն անարիտ և սնչարչարելի միշտ մնալով, առանց հաղորդութեան երկաքանչիւրոցն»¹. Կամ որ «երկոս Քրիստոս» կը դնէր՝ իը ճակատի նաև «Ապոլինարի և նորին հետեցելոցն» դէմ, և անոնց՝ որ «կերպարանօք և ոչ ճշմարտութեամբ վարկանին» Բանին մարդեղութիւնը. պահանջելով՝ որ ամբմիջը դաւանուի «Բանին մարմին, ոչ կարծեօք, կամ համարելով պատուոյ միայն ճոխութեամբ, այլ ճշմարիտ միաւորութեամբ»²: Միով բանին՝ Յովհաննէս կը պայքարի անոր դէմ՝ «գի ոչ յիշատակեցաւ բնաբանցդ անուն ի դէմս ըրիստոսասէր ուղղափառաց, այլ շարաշարն պատառմամբ խոստովանողաց»³. որ պարզ աշխարհաբարով կը նշանակէ՝ թէ երկու բնութեանց սահմանն ուղղափառական իմաստով չգործածուեցաւ, այլ նեատորական շարաշար բաժանմամբ: Ուրեմն ինք կ'ընդունի բնութեանց ուղղափառ բաժանումը, որ էր քաղկեդոնականը. և «զղասս բաժանող երկարընակ աղանդոյն»⁴ բացառութեամբ նեատորականները կ'իմանայ, ոչ զՔաղկեդոն, որոյ դէմ ոչ ինք և ոչ խանգարիչ ձեռքը բառ մ'ունին բնաւ ամբողջ ճառիս մէջ⁵. հասկնելով զմեզ՝ թէ այդ կաթողիկոսը հակառակ չէր Քաղկեդոնի, այլ ձայնակից լոկելայն:

13. Յովհաննէս այդ լեզուին ու զգացմանց հետ կը միաբանի իւր գործն ալ: Մարիկոնեան վարդանայ պատասմութեանէն ու յաղթանակներէն վերջ՝ Պարսիկները վերստին զօրացան, և իրենց զօրա-

զլիաց և նոյն ինքն խոսքովու առաջնորդութեամբ եկան վրէժ խնդրել, կոտորածի ու խուճապի մատնելով զՀայս, որոնք մինչև «ի հեռագոյն աշխարհս փախստական գնացին», կ'ըսէ հայ պատմիչը⁶, և որոց մէջ էր մեր կաթողիկոսն ալ, որոյ աքսորավայր եղաւ Բիւզանդիոն: Հոն հասան, կը գրէ ժամանակակից ասորի մը, Յովհաննէս եփեսապի, «կաթողիկոսն, և պիսկոպոսօք և բազում ազատօք ընդ նրմա», կայսերէն օգնութիւն խնդրելու համար, և մեծ ընդունելութիւն ու պատիւներ գտան Յուստինոսէ, որ անոնց բնակութեան պալատներ տուաւ, և իշխանաց զաւաճեցր սահմանեց՝ իսկ ինք ձեռնարկեց վեցամսայ պատերազմի մը Պարսից դէմ, որ մինչև յունական Հայաստանն արշաւեցին:

Արդ՝ մեր կաթողիկոսն իւր բոլոր հետեւորդներով, կը շարունակէ եփեսապի պատմիչը, հազիւ հասած՝ «գնացին առանց հարցանելոյ, և առանց հետազօտելոյ և կասկածանայ հաղորդեցան ընդ պատերազմի ըրադրին, և առանց ինչ փոյթ անելոյ հիմուճառոյ և հակառակութեան, որ ի խանգարմանէ ժողովոյն Քաղկեդոնի մտեալ էր յամենայն եկեղեցիս զաւառացն հողովնականաց: Յորժամ լու եղև այս յաշխարհին իւրեանց, զայրացան ընդ նոսա այլ եպիսկոպոսունքն և բնակիչք աշխարհին, և խստութեամբ զրեցին նոցա, զոր պահանջէ ժամանակն ծածկել ընդ լուութեամբ»⁷. անշուշտ՝ որպէս զի Բիւզանդիոնի պանդխտելոց ֆիասս չհասնէր անոնց անպատշաճ լեզուէն: «Վասն որոյ նոքա որոշեցան՝ բաժանեցան և արարին ժողով առանձին յապարանս մի մեծ՝ որ էր բնակարան միոյ ի զլիաւորաց նոցին: Անդ գումարեցաւ զոնք մեծ՝ յետ մահուան կաթողիկոսին իւրեանց»⁸. վասն զի «կաթողիկոսն մեռաւ յետ երկուց ամաց յոստանի անդ, առանց դառնալոյ ի հայրենիսն»⁹, որ կրակի մէջ էր: Մեր ուշա-

1. Գր. բարց, 80, 36. — 2. Անդ՝ 31, 33, 39. — 3. Անդ՝ 81. — 4. Անդ՝ 86. — 5. Սկ. 52-53. —

6. ՅՃ. եփես. Բ. Էր. — 7. Անդ՝ Էր. — 8. Անդ՝ Էր.

դրութիւնը կը գրաւէ այն անխտորութիւնը, որով մեր կաթողիկոսն ու հետեւորդ եւ պիսկոպոսունքը և իշխաններ «հաղորդեցան ընդ սինհոդականաց» (ըստ վերնագրին), և որ իրաւունք կու տայ մեզ խորհելու՝ թէ քաղկեդոնեան հարցը տակաւին ընդհանուր և կամ պաշտօնական բաժանման մը չէր յանգած մեր կողմէն, այլ կուսակցական խնդիր էր։ Ունէր հակառակորդներ, երկիւղ ազդելու չափ բազմաթիւ, և միանգամայն նպաստաւորներ, որոց մէջ էր կաթողիկոսն ալ՝ իւր հետեւորդներով. և զորս ոչ թէ ներքին համոզումը, այլ միւս կուսակցութեան երկիւղն է՝ որ կ'ընկրկէ հաղորդակցութենէն։ Այնպէս շրջանն էր այդ դէպ ի վերջնական իզուումը, որ վերահաս էր։

14. Արդ՝ Քաղկեդոնի ժողովէն մինչև հոգ տասներկու հայրապետներ թուեցինք, որոց հակաքաղկեդոնութեան մասին ոչ միայն չկան վաւերական յիշատակարանք, այլ ինչ ինչ հակառակ փաստեր ալ տեսանք, որ կը պահանջեն ընդունիլ՝ թէ հայ եկեղեցին աւելի քան դար մ'առաւել կամ պակաս չափով ճանաչող ու հետեւող էր Դ սիւնի, ժողովի վարդապետութեան, և Յունաց և այլոց հետ եկեղեցական միութեան մէջ կ'ապրէր անընդհատ։ Ասոնց համար կը զօրէ աւետարանական առաժը. «Որ ոչն է ընդ մեզ հակառակ՝ ի մեր կոյս է»։

Այս պատմական ճշմարտութիւնը կը հաստատէր նաև վրաց կաթողիկոսը Կիւրիոն 608ին, գրելով առ Արքահամ՝ թէ մինչև իրենց օրերը «միաբանութիւն էր վրաց և Հայոց ընդ միմեանս, և ամենայն իսկ վիճակիս արդոյ տեսան Գրիգորի միաբանորիւն եր ընդ հաւատոյն երդաստեմի՝ որով Հոռոմք վարին. և այլ ինչ բանք և խօսք չէին ուրուք եղեալ ի ներքս, իսկ այժմ ուստի՝ եղեմ»։ Երուսաղեմի և Հոռոմոց հաւատքը՝ քաղկեդոնական դաւանութիւնն էր, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Արդ

այս գրողն օղէն չէր խօսեր. այլ Յունաց քով կըթուած մարդ, երկար ժամանակ պաշտօն վարած էր մեր հայրապետանցին մէջ, ու Մովսէս կաթողիկոսն վրաց առաջնորդ ձեռնադրուած։ Հետեաբար քաղատեղեակ էր յունահայ կրօնական անցեալ յարաբերութեանց, և անկասկած ծանօթ մեր քննած նախկին յիշատակագրաց ևս՝ նախ քան իրենց խանգարումը, զոր ինքն ալ կը հաստատէ աղով։

Նոյն ինքն փոտ, թէպէտ ժամանակահերի (ժ դար), բայց բազմահմուտ մարդ, այս առաջին շրջանիս Հայոց գոտութեան վկայող որ և է յիշատակարան գտած չէր կոստանդնուպոլսոյ մէջ. որով կրնար գրել առ Զաքարիա՝ թէ «հակառակութիւն ինչ վասն ժողովոյն (Քաղկեդոնի) ոչ զոյր. այլ ամենեքեան ընդունէին զժողովն մինչև ի ժողովն Դունայ»։ այսինքն «ցվեց ամն Ներսեսի կաթողիկոսի որ յԱշտարակացն էր»։ Տեսանք այս սահմանին անհղութիւնը՝ ուրիշ յանցանքով. Ներսէս չբաժնեց հայ ազգը, եւ ասոր զօրաւոր փաստ մ'է այն պարագայն ալ՝ որ մեր հնազոյն գրիչներէն ոմանք Բարզեհի և ոմանք Աշտարակեցոյն կ'ընծայեն բաժանումը, համոզելով զմեզ՝ թէ ոչ մի հաստատուն կոռուս չունէին ի ձեռին՝ ի նրա պատմ մէկ կամ միւս տեսութեան, այլ կը հետևէին ենթադրութեան կամ սխալ գրոյցներու։

Հետեաբար այս բոլոր տեղեկութեանց անծանօթ պէտք էր ապրիլ, ըսելու համար՝ թէ «հայ եկեղեցին երբեք չուզեց ճանչնալ» Դ սիւնի. ժողովը՝ կամ թէ «Հայերը դատապարտած են Ե դարէն սկսեալ՝ Քաղկեդոնի ժողովը»։ ինչպէս աս. հիմն է 450էն յետոյ մեր կրօնական ու քաղաքական միութեան շարունակութիւնը Յունաց հետ՝ վերագրել ոչ դաւանակցութեան, այլ լոկ դրացութեան կամ անոնց քաղաքական զօրութեան՝, Երբ յետոյ Հայք իսկպէս զատուիլ ուզեցին, հաշուի

1. Գր. բրդոց, 179. — 2. Փոտ առ Զաք. Տէր Մի. հաւ. 110. — 3. Աս.՝ 238. — 4. Օրման, Ազգ. 490.

— 5. Թօփեհան, Լոյս, 1905, 834. — 6. Աստ. 491.

շառին այդ զօրութիւնը՝ որ կար միշտ, և որուն կարօտ էին միշտ: Եւ չէ կարեւրի ըմբռնել՝ թէ անոնք զՔաղկեդոն մերժելով սկիզբէն, կրնային նախ կրօնական միութեան մէջ մնալ քաղկեդոնական Յուսաց հետ այնքան ժամանակ, և յետոյ

խզուիլ նոյն խնդրոյն պատճառաւ: Հակասական և անտեղի կը լինէր իրենց ընթացքը: Օրմանեանի այս մտքի խաղը, ստեղծուած զբասեղանին առջև, սահմանուած է մնալու միշտ մտքի խաղ, ոչ պատմութիւն:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ ԿԱՄԵՆԻՑԷՆ ՖԻԼԻՊԷ

(1670-74)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ

ԲԱՋՄԱՎԷՊԻ՝ մէջ Ապրո Չէլչպիի կենսագրութիւնը վերջացնելէս առաջ խոստացայ հրատարակել նաև պուլկարահայոց պատմութեան համար շահեկան՝ մանաւանդ Ֆիլիպէի հայոց համար կարևոր մէկ երկու հին վաւերագրութիւն: Ասոնցմէ առաջինին կարևորութիւնը կ'ուզեմ շեշտել հոս, յարգելի ընթերցողիս ուշադրութեան յանձնելով սոյն քանի մը տողերս:

Հանդէս Ամսօրեայի¹ մէջ երբ Հ. Գալէքեարեան « Պէյօղլուի Գերեզմանատան » իր Պատմութեան ընթացքին կը գրէր Երեմիա Չէլչպի Գէօմիւրճեանի մասին, ստորին լուսանցքին վրայ կ'աւելցնէր թէ Երեմիա Չէլչպիի 1670ական թուականներուն զբաւ Ռումելիի Հայոց յանգուլընալ, բազմատողեայ պատմութիւնը՝ այժմ դժբախտաբար կորսուած է: — Արդ ուրախ եմ ըսելու որ սոյն պատմագրութիւնը տետրակի մը մէջ ամբողջութեամբ կը գտնուի, որմէ համառօտագրեալ է սոյն վաւերագրութիւնս:

Բնագիր տետրակին Ա. մասը կը պատկանի Ֆիլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյն հայերէ գրաւման և առաջին անգամ վերանորոգման, իսկ երկրորդ մասը լիակատար պատմութիւնն է հայոց 1671ին կամենիցէն փախուստին և երեք նաւերով

Սև ծովի վրայ թափանչելուն, որոնցմէ մէկ մասը հուսկ յետոյ կու գայ հաստատուիլ Ֆիլիպէ ու 1675ին Ս. Գէորգ մատուին տիրանալ:

Սոյն բնագիրը ձեռք անցնելէ առաջ Ֆիլիպէի հայ հնութիւններով զբաղած ատենա եկեղեցւոյ գրեքուն մէջ գտայ ձեռագիր « Ստորագրութիւն սուրբ եկեղեցւոյս » անուն 12 թերթեայ տետրակ մը՝ խնամքով գրուած: Տետրակիս կէսը նուր ուած է 1828ին Ֆիլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյն նորոգման նկարագրութեան իսկ միւս կէսը համառօտագրութիւնն է « Երեմիա » անուն մէկու մը գործին—որուն բնագիրը ինչպէս ըսինք ձեռք անցուցի վերջը:

Այս « Երեմիան » ուրիշ մէկը չէ բայց եթէ Երեմիա Չէլչպի Գէօմիւրճեան, մտերիմ բարեկամը Ապրո Չէլչպիի Ան աւանատես և ականջալուր վկան եղած է այդ դէպքերուն:

Հոս կու տանք համառօտագրութիւնը՝ որ ինքնին արդէն երկար է ըստ բաւականին:

« Ստորագրութիւն սուրբ եկեղեցւոյն » հատորիկը խիստ մեծ խնամքով կը պահուէր Ս. Գէորգի եկեղեցւոյն մէջ ի Ֆիլիպէ:

Սոյն և միւս պատմական վաւերագրութիւնները, որոնք Պուլկարահայոց պատմութեան համար առատ և շահեկան նիւթեր են, հետզհետէ կը խոստանամ հրատարակել:

1. Բգմ. 1926, էջ 42:

2. Հանգ. Ամս. 1911. էջ 474: